

Լ Ր Ա Ց ՈՒ Ց Ի Չ Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 6)

17 մայիսի 2013թ.

Ժամը 15⁰⁰

1. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նշավանում հասարակական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին:
(Հրահատ Ստեփանյան)
2. «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օծունեցի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օծուն համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին:
(Վանուշ Շերմազանյան)
3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» ծրագրի մասին:
(Շաղիկ Մարության)
4. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» ծրագրի մասին:
(Շաղիկ Մարության)
5. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի համայնքների համար «Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում» թեմայով դասընթացների կազմակերպում» ծրագրի մասին:
(Շաղիկ Մարության)
6. «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ապրել միասին, սովորել միասին» ծրագրի մասին:
(Սուսաննա Թադևոսյան)

7. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին

(Արման Բարխուդարյան)

- 7.1 Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1):
- 7.2 «Հայ-Ֆրանսիական միջազգային առողջապահական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին:

- 7.3 «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությանը ավտոմեքենայի նվիրատվության մասին:
- 7.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 5-ի N Մ-218-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ):
- 7.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մարտի 23-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում»):
- 7.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր N 1/1):
- 7.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր N 2/2):

8. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին (Արման Բարխուդարյան)

- 8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմադրամ (N1):
- 8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի N Մ-811-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Կազա» շվեյցարական մարդասիրական հիմադրամ):

9. Այլ հարցեր

- 9.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 26-ի N Մ-309-Ա որոշման մեջ և բեռի ցանկում փոփոխություններ կատարելու մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայտանի մասնճյուղ):
- 9.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 2-ի N Մ-113-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին («Հիկարի» հայ-ճապարհական գիտակրթամշակութային կենտրոն» հասարակական կազմակերպություն):

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

— մայիսի 2013 թվականի N Մ —
քաղ. երևան

—Ա ԼՊ. 6/1

**«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՆՇԱԿԱՆՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մայիսի -ի N 02/-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի -ի N 4Մ/3-4/-13 և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2013 թվականի մայիսի -ի N -13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 26845000 դրամ ընդհանուր արժողությամբ «Նշավանում հասարակական կենտրոնի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ԱՌԴԱ կոնստրակշն, թրեյդ ընդ թեքնոլոջի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011141) 2013 թվականի ապրիլի 29-ին կնքված՝ N Ն-29/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փրփրապատե սալերով հասարակական կենտրոնի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 20015000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2013 թվականի ապրիլի 30-ին կնքված՝ N 77-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 60 տոննա ցեմենտի ձեռքբերում՝ 26000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


3) «Գրիվա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04719504) 2013 թվականի մայիսի 3-ին կնքված՝ N Գ-03/05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փրփրապատե սալերի ձեռքբերում՝ 1589400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Բարեգործական հիմնադրամի
Հ. Ստեփանյանի կողմից
«25» ապրիլի 2013թ.




«Նշավանում հասարակական կենտրոնի կառուցում» ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	Արարատի մարզի Նշավան համայնքում փրփրապատե բլոկներով հասարակական կենտրոնի կառուցում: Բնակիչների համար կյանքի ավելի հարմար պայմանների ստեղծում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, սուբսիդի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի «Հայ ավետարանի առաքելություն» շահույթ չհետապնդող կազմակերպություն: ԱՄՆ, Փասադենա 91117
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (քաղ. երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արարատի մարզ, Նշավան համայնք. քաղաքաշինություն:
6.	Ծրագրի բյուջեն	26,845,000 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Արարատի մարզի Նշավանի համայնք:

ԼՊ. 6/1

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2013 թվականի մայիսի 15-ից մինչև 2014 թվականի մայիսի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շինարարական-կառուցապատման աշխատանքներ՝ մայիս 2013 թվական- մայիս 2014 թվական:
10.	Չեղք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շինարարական և կառուցապատման աշխատանքներ՝ 22,625,000 դրամ, փրփրապլաստե սալերի ձեռք բերում՝ 1,589,400 դրամ, ցեմենտի ձեռք բերում՝ 2,630,600 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: Ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի բնօրինակ կազմակերպական ծախսերի սահմաններում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով և Նշավանի համայնք:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ ներկայացվող հաշվետվություններ և «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների պարբերական այցելությունների միջոցով:

2/6/1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱԴԱՐԱՆ

2/6/1

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.05.2013թ. № 3/3.8-1/6594-13

Ձեռք № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահի
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 08.05.13թ. N 15/15.6/6304-13 գրության՝ կապված «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նշավանում հասարակական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է բյուջեի բացվածքը ներկայացնել ըստ միջոցառումների նկարագրության և անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալների:

Հարգանքով

Ատոմ Զանցուդադյան

034/12186-13
15.05.2013թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ձ. 6/1

№ 02/2695-13

15.05.2013թ.

0078 Երևան, Հայաբյան 41 ա, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 8-ի
15/15.6/6304-13 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Նշավանում հասարակական կենտրոնի կառուցում» ծրագրի 9-րդ
կետում անհրաժեշտ է նշել նաև նախատեսվող միջոցառումների համար անհրաժեշտ
ֆինանսական միջոցների ծավալը՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2003
թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման
պահանջները:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227

035/12161-13

15.05.2013թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԷ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ձ. 6/1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

№ Ձ. 6/3-4/5551-13

16.05.2013թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 08.05.2013թ. թիվ 15/15.6/6304-13 գրությանը կից ներկայացված
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Նշավանում հասարակական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին»
որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Ա. Միրումյան

Շրջակայքերի բաժին, հեռ.
060 544656

044/12373-13

16.05.2013թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ



МАРЗПЕТ АРАРАТА

2013/6/1

ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փ./60
Հեռ. /0235/ 2-52-16, /010/ 28-60-23

№ 2/3/4-1/2284-13 "15" 05 2013.

Ձեր թիվ 15/15.6/6304-12
08.05.2013թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
Նախագահ պարոն՝ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

„ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող „Նշավանում
հասարակական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ
հայտնվում է, որ առաջարկվում է ծրագիրը ճանաչել բարեգործական:

ՄԱՐԶՊԵՏ՝

Է.ԲԱՐՍԵՂՅԱՆ

Կատ.՝ Գ.Եղիազարյան
Հեռ. /0235/ 2-05-77

111/12191-13
15.05.2013թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Նշավանում հասարակական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ
առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների ու առաջարկությունների վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ	Հիմնավորում
Ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է բյուջեի բացվածքը ներկայացնել ըստ միջոցառումների նկարագրության և անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալների	Հաշվի է կառնվի՝ կազմակերպությունը կներկայացնի լրամշակված ծրագիր:
Ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել նաև նախատեսվող միջոցառումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Հաշվի է կառնվի՝ կազմակերպությունը կներկայացնի լրամշակված ծրագիր:

2013/6/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մայիսի 2013 թվականի N Մ-

-Ա ԼՐ. 6/2

քաղ. Երևան

**«ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻՄԱՍՏԱՍԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՕԶՆԵՑԻ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ
ԹՅԱՆ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ՕԶՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒՐԻՄ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հաստատված է՝
«Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի»
բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն

Դավիթ Շերմազանյան
2013թ.

ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի Սր. Մարիամ Աստվածածին եկեղեցին (պետ.ցուցակում՝ Սր.
Հովհաննես եկեղեցի, VI դար) վերականգնելու

Ծ Ր Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի -ի N 3/3.8-1/-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության մշակույթի նախարարության 2013 թվականի ապրիլի -ի N 02/-13, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2013 թվականի ապրիլի -ի N /-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի -ի N ՎՄ/3-8/-13 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի ապրիլի -ի N -13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի 49, ՀՎՀՀ՝ 00454829) իրականացվող՝ 320864260 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05001153) 2012 թվականի մայիսի 23-ին կնքված՝ N 1-Վ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 320864260 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

1	Ծրագրի նպատակը	Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի Սր. Մարիամ Աստվածածին եկեղեցին (պետ.ցուցակում՝ Սր. Հովհաննես եկեղեցի, VI դար)
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործ՝	Մովսես Վարազդատի Չավարյան /Ռ-Դ քաղաքացի, անճանաչ 46 07 452915, տրված 04.10.2006թ., ստորաքաժաման կող՝ 503-092, հաշվառված՝ Ռ-Դ, ք.Ռամենսկոե, Պրյամոլինեյնայա 24, բն 19 հասցեով/
4.	Ծրագիրը կատարողը՝	«Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, 0018, ք.Երևան, Տիգրան Մեծի 49), ՀՎՀՀ՝ 00454829
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Լոռու մարզ, Օձուն համայնք, հոգևոր և մշակութային արժեքների պահպա- նության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Նախնական 320864260 ՀՀ դրամ, որից՝ 2012թ. – 40 մլն. 2013թ. – 150 մլն. 2014թ. – 130864260 մլն.
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Աստվածապաշտ ժողովուրդը
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	01.06.2012թ. -25.12.2014թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Առանձին միջոցառումներ չեն նախա- տեսվում, պայմանագիր է կնքված «ԼԵՎԳՈՒԿ» ՓԲԸ-ի հետ ծրագրի ամբողջ գումարի արժեքով

ՁԻՆ 6/2

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	չկան
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	չկան
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	23.03.2012թ. ստորագրված Հուշագրի համաձայն՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, ՀՀ Մշակույթի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» ԲՀ, ՀՀ Մշակույթի նախարարություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ՁԻՆ 6/2

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

7.05.13 № 3/3.8-1/61836

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.05.13թ. N 15/15.8/6070-13 գրության՝ կապված «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել կատարվող շինարարական աշխատանքները ըստ իրենց համապատասխան գումարների:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան

034/11444-13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ըս. 6/2

0078 Երևան, Հայաստան 41 Կ, հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

5.08.13

02/2607-13

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 3-ի
15/15.8/6070-13 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի»
բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի
Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին
եկեղեցու վերականգնում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

035/11633-13

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ.՝ 380-227



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N 01/3.1/1481-13 6.05 2013 թ.

ըս. 6/2

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պրն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 2013 թ. մայիսի 3-ի N 15/15.8/6070-13 գրության՝
հայտնում ենք, որ «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի
մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ
դիտողություններ չունենք և առաջարկում ենք այն որակել որպես բարեգործական:

Հարգանքով՝

Նախարարի պաշտոնակատար՝

Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

021/11361-13

Կատ.՝ Ռ. Դեչյան
Հեռ.՝ 56-40-50



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՒ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Ն. 6/2

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

ՎՊ/3-4/5729-13
7.05.13

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 03.05.2013թ. թիվ 15/15.8/6070-13 գրությանը կից Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Օձուն համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի
մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

 Վ. Միրումյան

Շտաբակարգերի բաժին, հեռ.
060 544656

044/11432-13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

Ն. 6/2

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-28-77

թիվ 101/104.3.2/2297-13
« 7 » 05 2013 թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Ձեր 05.03.2013 թ. թիվ 15/15.8/6070-13 գրությանը

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Կարևորում եմ «Հովհաննես Իմաստասեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական
հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Տիգրան Մեծի 49, ՀՎՀՀ՝ 00454829) իրականացվող՝
320900000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն
համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագիրը և չեմ առարկում այն
որակել որպես բարեգործական:

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ



114/11466-13

Կառ. Ս. Լամբարյան
հեռ. /0322/ 2-33-99

«Հովիանեն Իմաստամեր Կաթողիկոս Օձնեցի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի Մուրք Մարիամ Աստվածածին եկեղեցու վերականգնում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտորդության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ ֆինանսների նախարարություն – 7.05.13, N 3/3.8-1/6183-13 1. Ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել կատարվող ծախսերի և ծախսերի անհրաժեշտ աշխատանքները և համապատասխան գումարների	1. Այս փուլում հնարավոր չէ նշել առանձին միջոցառումները և գումարները: Պարզաբանում կտրվի նիստին

Ն-6/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
մայիսի 2013 թվականի N Մ-
քաղ. Երևան

-Ա Ն-6/3

**«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԿԻՐԹԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԵՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի մայիսի -ի N 02/-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի մայիսի -ի N /-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի մայիսի -ի N ՎՄ/3-4/-13 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2013 թվականի մայիսի -ի N 01/14.2/-13 եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակել «Վորոլ վիժն ինթերնեյշլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 1748000 դրամ ընդհանուր արժողությամբ «Արագածոտնի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորոլ վիժն ինթերնեյշլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 00064024) 2013 թվականի ապրիլի 9-ին կնքված N WVA/TAL ADP/TR-13/004/FY13 պայմանագրում նշված գործարքը, որով

նախատեսվում է դասընթացների կազմակերպում՝ 2406092 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:


4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՁԻ-6/3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի ներքին

ՆԱԽԱԿԱՐԳՄԱՆ ԿՐՈՂՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԱԽԱԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԻ



<<Թալին SՏՕ-ի 16 համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն և կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում>>

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կազմակերպել և անցկացնել Թալինի տարածաշրջանի 16 (տասնվեց) համայնքներում գործող նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն և կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացներ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada
4.	Ծրագրի կատարողը	<<Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝ +37410749146
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Թալին, Դաշտարև, Կաթնաղբյուր, Մաստարա, Արտենի, Ներքին Սամաշեն, Աջակ, Ներքին Բազմաբեր, Հացաշեն, Զարինջա, Ագարակ, Կաթակատր, Վերին Բազմաբեր, Արևիկ համայնքներ:

ՁԻ-6/3

	Բնագավառը՝ կրթություն	
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է՝ 2,406,092 (երկու միլիոն չորս հարյուր վեց հազար իննսուն հինգ հազար) ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացող	Կրթական մարզի թաղիկի տարածաշրջանի թաղիկի թիվ 2, Ավետարանական, Գրիգոր Լուսավորչի, Կաթողիկոսի, Մատթարայի, Արտեմի, Ներքին Մասնաշենի, Աշակի, Մանուկյանի, Բազմաբերդի մանկապարտեզները և թաղիկի <<Հայկունի>>, Հացաշենի, Գրիգոր Լուսավորչի, Ագարակի, Կաթողիկոսի, Վերին Բազմաբերդի, Ակունքի մանկապարտեզական խմբակներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2013թ.-ի ապրիլի 9-ից - 2013թ.-ի հունիսի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիսաշաբաթական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսված է 2013թ.-ի ապրիլի 9-ից մինչև 2013թ.-ի հունիսի 30ը ժամանակահատվածում իրականացնել հետևյալ միջոցառումները 1. չորս օրյա դասընթացներ և ուղեկից աշխատանքներ 2. մեկական ուղորդող այցեր մանկապարտեզներ և նախակրթարաններ, ընդհանուր՝ 16 այց 3. համապատասխան գրականության և ուսուցողական նյութերի տրամադրում 4. դաստիարակների մեկ ուսուցողական այց երևանի ուսումնական կենտրոն:
10.	Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է՝ 2,406,092 (երկու միլիոն չորս հարյուր վեց հազար իննսուն երկու) ՀՀ դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Քալլ առ քալլ» բարեգործական հիմնադրամի հետ: Պայմանագրի և հավելվածների պատճենները կցվում են:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում <<Վորդ Վիմ Բեթերնեյշ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը համագործակցելու է թաղիկի տարածաշրջանի թաղիկ, Դաշտադեն, Կաթողիկոս, Մատթարա, Արտեմի, Ներքին Մասնաշեն, Աշակ, Ներքին Բազմաբերդ, Հացաշեն, Զարինջա, Ագարակ, Կաթողիկոս, Վերին Բազմաբերդ, Ակունք համայնքների դպրոցների և մանկապարտեզների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության ներամիջոցների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է <<Վորդ Վիմ Բեթերնեյշ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի, թաղիկի տարածաշրջանի զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող Վորդ Վիմ Կաթողիկոսի գրասենյակի կողմից: <<Վորդ Վիմ Բեթերնեյշ>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հսկման ծախսով:
-----	---	---

Շաղիկ Մարտիկյան

<<Վորդ Վիմ Բեթերնեյշ>> միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի գործառնությունների ղեկավար

30 ապրիլի 2013թ.

2-6/3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Զ Ա Պ Ե Տ

ա. 6/3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

8.05.13 № 3/3.8-1/6418-13

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 07.05.13թ. N 15/15.1/6199-13 գրության՝ կապված «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Արագածոտնի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուդաջյան

034/11657-13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078 Երևան, Հայաբյան 41 " , հեռ. 380385
Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am

02/2719-13
16.05.13

Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Ի կատարումն ՀՀ կառավարության 2013թ. մայիսի 7-ի
15/15.1/6199-13 թվակիր հանձնարարականի

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայտնում ենք, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» ծրագրի 1-ին և 7-րդ կետերի միջև առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի 1-ին կետով ծրագրի նպատակն է նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար ուսուցման դասընթացների կազմակերպումը, մինչդեռ ծրագրի 7-րդ կետով որպես բարեգործություն ստացող նշված են նաև նախադպրոցական խմբակները: Անհրաժեշտ է հստակեցնել նաև «երեխայակենտրոն» հասկացությունը: Հետևապես ծրագրի դրույթներն անհրաժեշտ է վերանայել՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները:

Հարգանքով՝

Գ. Մուրադյան

035/12361-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՏԵՂԱԿԱԼ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

№ 6/3

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ерван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: mien@edu.am, www.edu.am

N 03/04-1/5028 16.05.2013

«ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի մայիսի 7-ի №15/15.1/6199-13 գրության՝
հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային
բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող
«Արագածոտնի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և
մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական ժամանակակից
մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» որոշման նախագծի վերաբերյալ
«ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դիտողություններ և առաջարկություններ
չունի»:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ.ՄԿՐՏՅԱՆ

կապ. Ն. Սահակյան
հեռ. 524777

031/12 373-13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԻ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

№ 6/3

0015, Երևան, Մ. Խորենացու 3, 7
Հեռ. 50 20 20, 060 54 43 03

03/3-4/5410-13
15.05.13

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.05.2013թ. թիվ 15/15.1/6199-13 գրությանը կից ներկայացված
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային
բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից
իրականացվող «Արագածոտնի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և
մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական
ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» որոշման
նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544656

0214/12 069-13



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

№ 6/3

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 ք. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

15.05.13 N 01/12.1/1432-13

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Սիմոնյան

Ձեր 07.05.2013թ. թիվ 15/15.1/6199-13 գրությամբ ներկայացված ՀՀ կառավարության
2003թ. հունվարի 16-ի թիվ 66-N որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը
առաջարկում ենք որակել բարեգործական:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

110/12204-13
15.05.13

Կատարող՝ Պ. Համբարձումյան
հեռ. /0232/3-38-70

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Վերջին վիժն ինքերենքնել» միջազգային բարեգործական կազմակերպության կազմակերպության մասնաճյուղի կողմից իրականացվող
«Արագածոտնի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու
կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ արդարադատության նախարարություն - 16.05.13, N 02/2719-13	
1. Ծրագրի 1-ին և 7-րդ կետերի միջև առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ծրագրի 1-ին կետով ծրագրի նպատակն է նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար ուսուցման դասընթացների կազմակերպումը, մինչդեռ ծրագրի 7-րդ կետով որպես բարեգործություն ստացող նշված են նաև նախարարության կազմակերպությունները: Անհրաժեշտ է հստակեցնել նաև «երեխայակենտրոն» հասկացությունը:	1. Վրիպակը կշտկվի: Կազմակերպությունը կներկայացնի ծրագրի լրանշակված տարբերակը

№ 6/3

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ապրիլի 2013 թվականի N Մ- -Ա ՁԲ-6/4
քաղ. երևան

**«ՎՈՐԼԴ ՎԻՃԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻ ԾԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՌԻՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԵՐԵԽԱՅԱԿԵՆՏՐՈՆ ՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՄԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի ապրիլի -ի N 3/3.8-1/-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի ապրիլի -ի N 02/-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի ապրիլի -ի N /-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի ապրիլի -ի N ՎՄ/3-8/-13 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի ապրիլի -ի N -13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիճի Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2160000 դրամ ընդհանուր արժողությամբ «Գեղարքունիքի մարզի մի շարք համայնքների նախակրթարանների և մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն ու կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիճի Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 00064024) 2013 թվականի ապրիլի 16-ին կնքված N WVA/TAL ADP/TR-13/004/Ord-1/FY13 պայմանագրում նշված

ՁԲ-6/4


գործարքը, որով նախատեսվում է դասընթացների կազմակերպում՝ 2160000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ Վիճի Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետներին:

«Վորդի վիժն ինքերենշել» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն

Գրասիւս Սթրոնգի կողմից



«Գեղարքունիքի մարզի Վարդենիսի ՏԾ-ի համայնքների նախկին բնակիչների և մանկապարտեզների երեխայակենտրոն և կրթական ժամանակատեղի» մեթոդների ուսուցման դասընթացների կազմակերպում

Ծ Ր Ա Գ Ի Դ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է կազմակերպել Վարդենիսի մանկապարտեզների ուսուցիչների համար երեխայակենտրոն և կրթական ժամանակակից մեթոդների ուսուցման դասընթացներ և բարձարցնել ուսուցիչների մասնագիտական որակավորումը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտավոր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	Վորդի Վիժն Ֆրանսիայի աջակցող գրասենյակ հասցե՝ Վիժն Դու Մոնր, 7 րուե Փաքուիթ, 75008, Փարիզ, Ֆրանսիա, հեռախոս՝ +01 49 49 11 12
4.	Ծրագիրը կատարողը	«Վորդի վիժն ինքերենշել» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ հասցե՝ ք. Երևան, Ռ. Մելիքյան փող. թիվ 1, ՀՎՀՀ՝ 02528755


25-6/4

2

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Գեղարքունիք մարզի Վարդենիս, Ակունք, Շուկակ, Գեղարքունիքի մարզի Վարդենիս, Մեծ Մարիկ և Լուսակունք համայնքներ						
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,160,000 ՀՀ դրամ:						
7.	Բարեգործություն ստացողը	Գեղարքունիքի մարզի Վարդենիս, Ակունք, Շուկակ, Գեղարքունիք, Մեծ Մարիկ և Լուսակունք համայնքների մանկապարտեզները:						
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	16 ապրիլի 2013 թ. – 30 սեպտեմբերի 2013 թ.						
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<table border="1"> <thead> <tr> <th>Միջոցառումների նկարագրությունը</th><th>Ժամկետները</th><th>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</th></tr> </thead> <tbody> <tr> <td>ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի գործող յոթ մանկապարտեզների տասնյոթ ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձարում:</td><td>16 ապրիլի 2013թ. – 30 սեպտեմբերի 2013 թ..</td><td>2,160,000 դրամ</td></tr> </tbody> </table>	Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ	ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի գործող յոթ մանկապարտեզների տասնյոթ ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձարում:	16 ապրիլի 2013թ. – 30 սեպտեմբերի 2013 թ..	2,160,000 դրամ
Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ						
ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի գործող յոթ մանկապարտեզների տասնյոթ ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձարում:	16 ապրիլի 2013թ. – 30 սեպտեմբերի 2013 թ..	2,160,000 դրամ						
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ասպրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի ընթացքում 2,160,000 դրամի շրջանակներում յոթ մանկապարտեզների տասնյոթ ուսուցիչների համար կանցկացվեն վերապատրաստման դասընթացներ, ուսուցիչների ուսուցողական այցեր <<Քայլ առ Քայլ>> Հիմնադրամի վերապատրաստման կենտրոն: Ծրագրի իրականացման ընթացքում կիրականացվի ծրագրային մոնիտորինգ, իսկ ծրագրի ավարտից հետո կներկայացվի ամփոփ հաշվետվություն:						
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական $\approx$ ծախսեր նախատեսված չեն:						
12.	Հասնագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, այլ	«Վորդի վիժն ինքերենշել» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի						

25-6/4

	կազմակերպությունների հետ	մարզի Վարդենիս, Ակունք, Ծովակ, Կարճաղբյուր, Մեծ Մարիկ և Լուսակունք համայնքների տեղական իշխանությունների հետ համագործակցելով:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվելու է <<Վորլդ Վիժն Բնթերնեյշն>> ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի և Վարդենիսի տարածքային զարգացման գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Բնթերնեյշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային ասոցիատի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին տարեկան հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:



Շաղիկ Մարուկյան

<<Վորլդ Վիժն Բնթերնեյշն» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի գործառնությունների ղեկավար

30 ապրիլի 2013թ.

21-6/4



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

21-6/4

8.05.13 № 8/3.8-1/6313-13

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

